



ԶԵԿՈՒՅՑ

«Ընտրությունը քոնե է» հասարակական կազմակերպության` 2005թ. հոկտեմբերի 9-ին` Կոտայքի, Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում կայացած ՏԻՄ ընտրությունների ընթացքում իրականացրած տեղական դիտորդական առաքելության արդյունքների վերաբերյալ

11 հոկտեմբերի, 2005թ.

ԸՔ հկ գնահատմամբ, հոկտեմբերի 9-ին ՏԻՄ ընտրությունների ընթացքում դիտարկված ընտրատեղամասերում արտաքնապես խաղաղ, ընդհանուր առմամբ առանց արտակարգ միջադեպերի քվեարկությունը դեռևս չի խոսում ընտրողների գիտակցված, առանց ներազդեցության ընտրության մասին:

Նախընտրական քարոզարշավի դիտարկումները ցույց են տվել, որ քվեատուների մի զգալի մաս ՏԻՄ ընտրություններին մասնակցում են` թեկնածուներից որոշակի ակնկալիքներ ունենալով, անձնական բնույթի շահագրգռություններից դրդված և ոչ` իրենց համոզմամբ, իրենց նախընտրած թեկնածուին ձայն տալու գիտակցությունից մղված:

Տեղական, երբեմն` մարզային ու հանրապետական իշխանությունների ակտիվ հովանավորությամբ ընթացող ՏԻՄ ընտրությունները թեկնածուների միջև անհավասար պայմաններ են ստեղծել նախընտրական փուլում:

Ընտրողների վրա անօրինական ներազդեցությունը շարունակվել է քվեարկության օրը, երբ համատարած կերպով ՏԸՀ-ների, վստահված և կողմնակի անձանց կողմից դիտարկվել են քվեարկության արդյունքները: 2005թ.-ի ընտրություններում առավել տարածված ընտրախախտումը` բաց քվեարկությունը, հետևանք է ԿԸՀ կողմից սահմանած նոր քվեախցերի կառուցվածքի և «ՀՀ ընտրական օրենսգրքի» որոշ դրույթների, որոնք հնարավորություն են տալիս ազատորեն վերահսկելու և ուղղորդելու ընտրողների կամարտահայտությունը:

Նոր քվեախցերի կառուցվածքը սահմանելիս` շրջանցվել է «ՀՀ ԸՕ»-ի 48-րդ հոդվածի առաջին կետի պահանջը, այն է` «Քվեարկության խցիկը պետք է կահավորված լինի այնպես, որ քաղաքացին կարողանա տեղամասային կենտրոնում ներկա գտնվող անձանցից գաղտնի լրացնել քվեաթերթիկը»:

ԸՔ հկ-ն ևս մեկ անգամ իր խիստ մտահոգությունը հայտնելով ներկա քվեախցերի կառուցվածքի վերաբերյալ` նշում է, որ հանդես է գալիս հարյուրավոր ընտրողների անունից, որոնք բողոքում են քվեախցերի անհարմարությունից և խնդրում բարձրաձայնել իրենց պահանջը` փոփոխելու ընտրախցերի կառուցվածքը և ապահովելու իրենց քվեարկության գաղտնիությունը` հատկապես փոքր քաղաքներում և գյուղական համայնքներում, որոնցում ընտրողների կամքի վրա ներազդելու մեխանիզմներն ավելի մեծ են և քվեարկության արդյունքները` վերահսկելի:

ԸՔ հկ-ի կողմից` ընտրացուցակների անճշտությունների վերաբերյալ բազմիցս հնչեցրած ահազանգը ևս դարձյալ պատկան մարմինների կողմից մնում է

անարձագանք: Վերջնական ցուցակների թերությունների հետևանքով զգալի թվով ընտրողներ այս անգամ ևս զրկվել են ընտրելու՝ սահմանադրորեն իրենց տրված իրավունքից:

ԸՔ հկ դիտորդները հոկտեմբերի 9-ի ՏԻՄ ընտրությունները դիտարկել են՝ Կոտայքի մարզի (Եղվարդի, Նոր Հաճնի, Բյուրեղավանի, Աբովյանի, Ակունքի), Արարատի մարզի (Մասիսի, Վեդու, Նորաշենի, Արարատի, Բյուրավանի), Վայոց Ձորի (Եղեգնաձորի, Վայքի, Շատինի, Աղավնաձորի, Մալիշկայի), Սյունիքի մարզի (Կապանի, Մեղրիի, Քաջարանի, Արծվանիկի, Ագարակի)՝ թվով 98 ընտրատեղամասերում:

Դիտարկվել են ընտրական հանձնաժողովների գործողությունները, քվեարկության գործընթացի օրինականությունը, ընտրատեղամասերի ներսում և դրսում տիրող մթնոլորտը, քվեատուների ազատ կամարտահայտության իրավունքի պահպանումը:

ԸՔ հկ դիտորդների արձանագրած փաստերից մտահոգիչ են՝

- ընտրացուցակների անձշտությունները.
- քվեարկության գաղտնիության սկզբունքի համատարած խախտումները, բաց քվեարկությունը.
- ընտրակարգի խախտումները.
- անօրինական քարոզչությունը և ընտրողների կամարտահայտության վրա ներազդեցությունը.
- ընտրական տեղամասերի տեղակայման և կառուցվածքի անհարմարությունները:

Ընտրողների ցուցակների անձշտությունները

Կոտայքի, Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի վերը թվարկված համայնքներում ՏԻՄ ընտրությունների երկարաժամկետ դիտարկումների արդյունքում հայտնաբերված թերությունները նախևառաջ վերաբերվել են ընտրողների ցուցակներին: Ընդ որում, ընտրացուցակների զգալի թվով անձշտություններ են հայտնաբերվել ոչ միայն քաղաքներում, այլև՝ գյուղական համայնքներում, ինչը ծնել է մարդկանց արդարացի վրդովմունքը: Այսպես՝

- Մահացած մարդկանց անուններ, ընտրողների անունների բազմաթիվ կրկնություններ են հայտնաբերվել Վայոց Ձորի Մալիշկա, Շատին գյուղական համայնքների, ինչպես նաև՝ Եղեգնաձոր քաղաքի ընտրատեղամասերի ընտրացուցակներում:
Բազում անձշտություններով էին նաև Արարատի մարզի Վեդի և Նորաշեն համայնքների նախնական ընտրացուցակները:
- Վայոց Ձորի Շատին համայնքում հայտնաբերելով մահացած հոր անունն ընտրողների ցուցակում՝ համայնքի բնակիչը դա համարել է անպարկեշտ վերաբերմունք իր և համայնքի բնակիչների հանդեպ և պատռել է ընտրողների ցուցակը, ինչի պատճառով վիճաբանություն է ծագել:
- Նույն՝ Շատին համայնքում ընտրողների ցուցակներին կից չի փակցվել համապատասխան տեղեկանք ցուցակների անձշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, տեղի, քննարկման կարգի, ժամանակի, պայմանների մասին: Այս վիճակն է եղել համայնքում, ըստ մեր դիտորդի, ընդհուպ մինչև 02.10.2005թ.-ը, ինչը հնարավորություն չի տվել շատ ընտրողների ժամանակին և օրենքով ընդունված կարգով դիմել համապատասխան մարմիններին:

- Վայոց Ձորի Աղավնաձոր համայնքում (թիվ 39/1 տեղամաս) ընտրողների նախնական ցուցակները բավական ուշացումով են տրամադրվել ՏԸՀ-ին և փակցվել տեղամասում:
Այստեղի չճշգրտված վերջնական ցուցակներից դուրս մնացած 20 ընտրող, ԸՔ հկ դիտորդի վկայությամբ, չեն դիմել դատարան, քանի որ նրանց համար դատարան դիմելը դժվարությունների հետ էր կապված (դատարանը գտնվում է Աղավնաձորից մոտ տաս կիլոմետր հեռավորությամբ՝ Եղեգնաձորում):
- Եղեգնաձորի ընտրողների ցուցակները, ըստ ԸՔ հկ դիտորդների ուսումնասիրությունների, նախորդ ընտրությունների համեմատ, մի քայլ ետ են: Նրանցում տեղ են գտել վաղուց իրենց մահկանացուն կնքած, անգամ, երկու տասնամյակ առաջ համայնքի հաշվառումից դուրս եկած մարդկանց անուններ: Փոխարենը, արձանագրվել են իրականում հաշվառում ունեցող ընտրողների՝ ցուցակներից դուրս մնալու փաստեր: Ընտրացուցակների անձշտություններից դժգոհ քաղաքացիները այդ խայտառակ վիճակի համար մեղադրում են լիազոր մարմնի՝ Եղեգնաձորի համապատասխան ստորաբաժանման պետին: Իրենց անունը վերականգնելու կամ այլ անձշտություններ վերացնելու նպատակով վերջինիս դիմող քաղաքացիները հանդիպել են դժվարությունների, պաշտոնատար անձին ոչ մի կերպ չեն գտել տեղում՝ իր պաշտոնական պարտականությունները կատարելիս, համապատասխան տեղեկանք ստանալու համար ավելորդ քաշքշուկների հանդիպելով՝ ձանձրացել, զայրացել ու հեռացել են: Նման միջադեպեր արձանագրելով՝ մեր դիտորդը նշել է նաև, որ ընտրողները հիասթափված հրաժարվել են գրավոր կերպով դիմումներ ներկայացնելուց: Սրանով, ահա, պետք է նաև բացատրել այն իրողությունը, որ չնայած ընտրացուցակների բազմաթիվ անձշտություններին, իրենց անունը ճշգրտելու նպատակով իրավասու մարմիններին պաշտոնապես դիմած քաղաքացիների թիվը շատ քիչ էր:
- Խոշոր թերություններ ունեին նաև Եղեգնաձոր քաղաքի վերջնական ցուցակները:
Ընտրելու իրավունքից են զրկվել ամբողջական ընտանիքներ, որոնց ընտրելու իրավունք ունեցող բոլոր անդամները դուրս են մնացել ցուցակներից (օրինակ, Եղեգնաձորի թիվ 39/1, 39/4 տեղամասերում): Ընտրողների մի զգալի մաս (օրինակ, 39/4-ում), զայրացած այս իրավիճակից՝ չեն դիմել դատարան:
- Անմխիթար վիճակում էին Նոր Հաճնի բոլոր ընտրատեղամասերի վերջնական ընտրացուցակները: Իրենց անունը ցուցակում վերականգնելու և ընտրելու իրավունք ստանալու նպատակով նորհաճնեցիները ստիպված պետք է դիմեին Նաիրիի առաջին ատյանի դատարան, ինչն առանձնակի անհարմարություն էր ստեղծում բազում ընտրողների համար:
Շատերը հենց այդ պատճառով հրաժարվել են դիմել դատարան և վերականգնել իրենց ընտրելու իրավունքը:
- Վերջնական ընտրացուցակների անձշտությունները մեծ թիվ էին կազմում նաև Արարատի մարզի դիտարկված տեղամասերում: Դրանց անմխիթար վիճակը կոծկելու և դատարանի վճռով քվեարկելու իրավունք ստացած ընտրողների թիվը պակաս ներկայացնելու նպատակով, օրինակ, Նարեկի թիվ 17/01, նաև Մասիսի որոշ ՏԸՀ-ներ, ցուցակից դուրս մնացած ընտրողներին թույլ էին տալիս քվեարկել ոչ թե դատարանի վճիռը ներկայացնելով, այլ՝ ՀՀ ոստիկանության ստորաբաժանման անձնագրային բաժնի սովորական տեղեկանքով:

- Արարատ գյուղական համայնքի 18/01 տեղամասում ընտրողների նախնական ցուցակներում ընդգրկվել էին դեռևս նախորդ դարի 60-ական թվականներին մահացած անձանց անուններ: ԸՔ հկ դիտորդի և վստահված անձ Էդվարդ Ադամյանի ջանքերի և հետևողականության շնորհիվ հայտնաբերվել են 220 մահացածի անուններ, որոնք տեղ չեն գտել վերջնական ցուցակներում: Սակայն դրանով վերջնական ցուցակները անթերի չեն դարձել: Դարձյալ, օրինակ, նրանում հայտնաբերվել է գործող գյուղապետ, համայնքապետի թեկնածուի հոր՝ Մելքոնյանի անունը, որ մահացել է 1972 թվականին: Փոխարենը նույն ցուցակից դուրս էր մնացել օրենքի տառին հետևող վստահված անձ, համայնքում 1987թ.-ից գրանցում ունեցող Էդ. Ադամյանի անունը, այն դեպքում, երբ նախնականում այդ անձի անունը կար: Այսպիսի անձատրություններն, իհարկե, դժվար է իբրև պատահականության արդյունք դիտարկել:

- Արարատի մարզի բոլոր ընտրատեղամասերում ընտրողների վերջնական ցուցակները փակցվել են ոչ թե քվեարկությունից երկու օր առաջ, ինչպես ԸՕ-ն է պահանջում, այլ՝ մեկ օր առաջ:

- Կապանի բոլոր ընտրատեղամասերի վերջնական ընտրացուցակներում բացակայում էին տասնյակ ընտրողների անուններ, երբ նույն ցուցակներում տեղ էին գտել մահացածների, համայնքում մի քանի տարի գրանցում չունեցող անձանց անունները:

Իրենց ընտրելու իրավունքը վերականգնելու նպատակով դատարան դիմողների թիվն այնքան շատ էր, որ հերթեր էին գոյացել:

- Արարատի մարզի Քաղցրաշեն համայնքի թիվ 18/01 տեղամասի ընտրողների ցուցակներում ընդգրկված էին 2000-ից ավելի՝ 2208 ընտրողներ, ինչն ԸՕ-ի պահանջի խախտում է:

Ընդ որում, Քաղցրաշենի վերջնական ընտրացուցակներում ընդգրկվել են նաև հարևան գյուղի՝ Նարեկի 78 ընտրողներ: Քաղցրաշենի նախնական ցուցակներում նարեկցիների թիվը 200-ով ավելի է եղել: Թեև Քաղցրաշենի գյուղապետի ջանքերով նախնական ցուցակներից հանվել է Նարեկ համայնքում գրանցում ունեցող այդ 200 ընտրողների անունները, սակայն Նարեկում գրանցված 78 ընտրողի անուններն այդպես էլ մնացել էին ցուցակներում:

Փաստորեն, հարևան համայնքի ընտրողները պետք է ընտրեին այլ համայնքի ղեկավարի: Վերջնական ցուցակում, օրինակ, շարունակում էր մնալ Նարեկի բնակիչ, նրանում գրանցում ունեցող Ալլա Ավագյանի անունը, երբ նրա հոր, նույն համայնքի բնակիչ Լևիկ Ավագյանի անունը, գյուղապետի ջանքերով, հաջողվել էր հանել ցուցակից:

Ստեղծված իրավիճակը Քաղցրաշենում բացատրում էին նրանով, որ խորհրդային շրջանում Նարեկը եղել է Քաղցրաշենի տնկարանային տնտեսությունը և ետխորհրդային շրջանում է ձևավորվել՝ որպես առանձին գյուղական համայնք: Լիազոր մարմնի անփութության պատճառով 2005թ. ՏԻՄ ընտրություններում գործածության մեջ են դրվել տասնհինգ տարվա վաղեմության տվյալներ:

Քվեարկության գաղտնիության սկզբունքի համատարած խախտումները, բաց քվեարկությունը.

Ինչպես և ս.թ. սեպտեմբերին և հոկտեմբերին Երևանի համայնքներում կայացած ընտրություններում, այնպես էլ հոկտեմբերի 9-ի ՏԻՄ ընտրությունների դիտարկումների արդյունքում ԸՔ հկ-ն արձանագրում է, որ քվեարկության

գաղտնիության սկզբունքի ոտնահարումը համատարած բնույթ է կրում և մեծամասամբ կատարվում է դիտավորությամբ: ՏԸՀ անդամները, վստահված անձինք ընտրողների՝ գաղտնի քվեարկություն իրականացնելու իրավունքը խախտելու նպատակով գործածում են ԸՕ-ի 57-րդ հոդվածի չորրորդ դրույթը, որը բառացիորեն հնարավորություն է տալիս դիտարկելու և վերահսկելու քվեարկության արդյունքները:

ԸՔ հկ-ն նաև չի զլանում մի՝ ոչ ավելորդ անգամ ահազանգել, որ նոր քվեախցերը ևս իրենց կառուցվածքով չեն ապահովում քվեարկության գաղտնիությունը:

- Աբովյանի և Արարատի դիտարկված տեղամասերում համատարած կերպով բաց քվեարկություն է ընթացել:
Հանձնաժողովների՝ կնքելու համար պատասխանատու անդամները դիտարկել են քվեարկության արդյունքները: Ընտրողները շատ հաճախ քվեաթերթիկները զցել են քվեատուփ՝ բաց, բոլորի համար դիտարկելի վիճակում:
Քվեարկության գաղտնիությունը չի պահպանվել, քվեախցերի մոտ ՏԸՀ ղեկավարներն ու անդամները, վստահված անձինք դիտարկել և ընտրողներին ուղղորդել, թելադրել են՝ ու՛ն օգտին քվեարկել ԸՔ հկ կողմից դիտարկված համարյա բոլոր տեղամասերում (օրինակ, Աբովյանի թիվ 28/14, 28/13, Բյուրեղավանի թիվ 27/01, Նոր Հաճնի թիվ 27/04, 27/05, 27/02, 27/03, Մասիսի 16/1, 16/5, 16/7, Եղեգնաձորի թիվ 39/1 տեղամասերում):
- Իսկ ահա Նոր Հաճնի թիվ 27/04 տեղամասում ՏԸՀ նախագահը ոչ միայն անմիջապես քվեախցերի մոտ դիտարկում էր ընտրողների գործողությունները, այլև, իր ձեռքն առնելով գրիչը, ինքն անձամբ էր ընտրողների փոխարեն քվեաթերթիկում նշում կատարում:
Նոր Հաճնում հանձնաժողովների կողմից լիովին թելադրված քվեարկության արդյունքում, ըստ նախնական տվյալների, քվեարկությանը մասնակցած 4537 ընտրողներից 2161-ը քվեարկել են հօգուտ գործող քաղաքապետի՝ Արմեն Քեշիշյանի օգտին, որը 312 ձայնի առավելությամբ առաջ է անցել իր մրցակցից (439 քվեաթերթիկ համարվել է անվավեր):

Ընտրակարգի խախտումները

- ՏԸՀ՝ քվեաթերթիկը կնքող անդամները չէին ստուգում ընտրողների անձը հաստատող փաստաթղթերը Աբովյանի, Արարատի, առանց բացառության, բոլոր տեղամասերում (օրինակ, թիվ 28/14, 28/13, 27/01, Կապանի 38/01, 38/14, Եղեգնաձորի 39/4 տեղամասերում): ԸՕ պահանջով դա պետք է արվի՝ ընտրողների ինքնության վերաբերյալ հավաստիանալու նպատակով:
Կնքող անդամներն անգամ չունեին տեղամասերում ընդգրկված հասցեների ցուցակը՝ ընտրողների՝ դրանցում հաշվառում ունենալու փաստը ստուգելու համար:
- Աբովյանի թիվ 28/13 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների միջև պարտականությունները վիճակահանությամբ չեն բաշխվել ինչպես քվեարկության նախօրեին (երբ որոշվել են քվեաթերթիկները ստորագրող անդամները), այնպես էլ՝ քվեարկության օրը:
ԸՔ հկ դիտորդի դիտողությանն ի պատասխան՝ ՏԸՀ նախագահ Մարատ Սմբատյանը, որ միաժամանակ Աբովյանի քաղաքապետարանի բիզնես կենտրոնի տնօրենն է, պատճառաբանեց, որ՝ «դա ավելորդ բյուրոկրատիա

է», և որ ինքն իրեն իրավասու է համարում որոշելու, թե ով ինչի համար պատասխանատու պետք է լինի իր ղեկավարած ՏԸՀ-ում:

- Կրկնակի քվեարկության փորձ է արվել Նոր Հաճնի թիվ 27/05 տեղամասում: ԸՔ հկ դիտորդը նկատել է, որ ընտրող Նարինան Թումանյանը քաղաքապետի և ավագանու թեկնածուների երկուական քվեաթերթիկ՝ արդեն քվեարկած վիճակում, փորձում է գցել քվեատուփ:
- Նոր Հաճնի թիվ 27/05, 27/02, 27/03 տեղամասերում շարունակաբար նույն քվեախցերում միաժամանակ երկուական քաղաքացի են քվեարկել՝ չպահպանելով քվեարկության գաղտնիության սկզբունքը:
- Ընտրացուցակներից դուրս մնացած քաղաքացիներին Նարեկի թիվ 17/01, նաև Մասիս քաղաքի տեղամասերում թույլատրվում էր քվեարկել ՀՀ ոստիկանության ստորաբաժանման անձնագրային բաժնի տված տեղեկանքներով, երբ ՀՀ ԸՕ-ն միանշանակ սահմանում է, որ՝ «Տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվում են 14 հոդվածի վեցերորդ կետի համաձայն դատարանի վճիռները ներկայացրած քաղաքացիները» (ԸՕ հոդված 14¹, երկրորդ կետ):
ԸՕ-ի երկու՝ 14 և 14¹ հոդվածների պահանջները ՏԸՀ-ների կողմից, մեր գնահատմամբ, խախտվել են ոչ թե օրենսգրքի չիմացության պատճառով, այլ՝ դիտավորությամբ:
Թիվ 17/01 ՏԸՀ անդամը ԸՔ հկ դիտորդի ներկայությամբ նշել է, որ սա արվում է, որպեսզի ընտրողների՝ ընտրելու իրավունքը վերականգնելու վերաբերյալ դատարանի կայացրած վճիռները մեծ թիվ չկազմեն, և ակնհայտ չդառնան ընտրացուցակների խոշոր անձշտությունները:
- Արարատի մարզի՝ ԸՔ հկ կողմից դիտարկված բոլոր տեղամասերում քվեաթերթիկները ստացվել են խիստ ուշացումով, քվեարկության նախորդ օրվա ժ. 19:00-ին, այդ պատճառով ՏԸՀ անդամներն օրենքով սահմանված ժամկետներում չեն կարողացել ավարտել քվեաթերթիկների ստորագրությունը. այն ավարտվել է հաջորդ օրը (օրինակ թիվ 18/03-ում ստորագրելու գործընթացն ավարտվել է քվեարկության օրը՝ ժամը 1:00-ից հետո):
Այսպիսով, չի պահպանվել ԸՕ-ի 53-րդ հոդվածի առաջին կետի պահանջը:
- Աղավնաձորի թիվ 39/1 տեղամասում ինքնուրույն քվեարկելու անկարող ընտրողներին դեպի քվեախուց են առաջնորդել և օգնել քվեարկություն իրականացնել վստահված անձինք, ինչը ԸՕ-ի 56-րդ հոդվածի չորրորդ կետի կոպիտ խախտում է:
- Եղեգնաձորի թիվ 39/1 տեղամասում արձանագրվել են դեպքեր, երբ ընտրողներին տրամադրվել են՝ ՏԸՀ համապատասխան անդամների կողմից չստորագրված քվեաթերթիկներ:

Աթնուորտն ընտրական տեղամասերում. անօրինական քարոզչությունը

ԸՔ հկ դիտորդները որոշ տեղամասերում աշխատել են լարված, երբեմն բարդ մթնոլորտում, ինչը պայմանավորված էր սուր, անհանդուրժողականության պայմաններում ընթացող, օրինականության սահմանը գերազանցող ընտրապայքարով և ընտրատեղամասային հանձնաժողովների՝ իրավիճակը վերահսկելու և կարգավորելու անվարժությամբ, երբեմն էլ՝ տեղամասերում անկառավարելի վիճակ ստեղծելու դիտավորությամբ:

Այսպես՝ Արարատի մարզի Նորաշեն համայնքում գործող համայնքապետ, համայնքապետի թեկնածու Գուրգեն Վարդանյանի և նրա մրցակից Գարուշ

Սարգսյանի կողմնակիցների միջև սրված պայքարը նախընտրական շրջանում հասել է ձեռնակռվի. Գ.Վարդանյանի վարորդը ծեծի է ենթարկել մրցակցի կողմնակիցներին, ինչի հետևանքով բերման է ենթարկվել և կալանվել ոստիկանության կողմից:

- Քվեարկության օրն անօրինական քարոզչություն են իրականացրել և ընտրողների վրա ներագդել Արմյանի, Արարատի տեղամասերի մուտքերի մոտ խմբված «թաղի տղաները»:
- Եղեգնաձորի 39/1 տեղամասում վստահված անձն ընտրողների շրջանում պարբերաբար քարոզչություն է իրականացրել և ուղղորդել՝ ու՛մ օգտին քվեարկել:
- Ընտրողների խոշոր և երկարատև կուտակումները, հերթերը երբեմն դժվար վերահսկելի իրավիճակ են առաջացրել Արարատի թիվ 18/01, 18/03, Աղավնաձորի թիվ 39/1, Եղեգնաձորի թիվ 39/1, 39/4, Կապանի 38/01, 38/14 տեղամասային կենտրոններում:

Դա, ըստ ԸՔ հյ դիտորդների, ՏԸՀ-ների արհեստավարժության պակասի, ԸՕ-ից և ընտրագործընթացներից անբավարար տեղեկացվածության, իրավիճակը կարգավորելու անկարողության հետևանք էր:

Ընտրական տեղամասերի տեղակայման և կառուցվածքի անհարմարությունները

- Մասիս քաղաքի բոլոր տեղամասերում բացակայում էին տեղամասերի համարները նշող ցուցանակները, ինչն ընտրողների շփոթության առիթ էր դառնում:
- Արարատի 18/01, 18/03 տեղամասերում ընտրողների երկարատև կուտակումներն առաջացել են նաև այն պատճառով, որ, ըստ ԸՕ-ի պահանջի, ընտրատեղամասերին չեն տրամադրվել համապատասխան թվով ընտրախցեր: Այսպես, 18/01 տեղամասում 1900, իսկ 18/03-ում՝ 1800 ընտրողի համար տրամադրվել են երկուական քվեախցեր, այն դեպքում, երբ մեկ քվեախուց պետք է տրամադրվի յուրաքանչյուր 750 ընտրողի:
- Կապանի թիվ 38/17, 38/19, Նոր Հաճնի 27/05, 27/04 տեղամասային կենտրոններն անհարմար, նեղ վայրերում էին տեղակայված, ինչի հետևանքով դժվարացել է քվեարկության գործընթացների իրականացումը:
- Ճիշտ չէին ձևավորված դիտարկված շատ տեղամասեր, ինչը դժվարացնում էր և՛ հանձնաժողովների աշխատանքը, և՛ թույլ էր տալիս դիտարկելու և վերահսկելու ընտրողների քվեարկության արդյունքները: Այսպես՝
 - Կապանի թիվ 38/01 տեղամասում ընտրացուցակները փակցված էին անմիջապես հանձնաժողովի անդամներին հատկացված սեղանների հարևանությամբ. ընտրողների կուտակումները ցուցակների մոտ հնարավորություն չէին տալիս ՏԸՀ-ին նորմալ կերպով իրականացնելու իր գործընթացները:
 - Դիտարկված տեղամասերից շատերը ձևավորելիս չի պահպանվել ԸՕ պահանջը, ըստ որի՝ «քվեարկության խցիկները պետք է տեղադրվեն քվեաթերթիկների հատկացման սեղանների և քվեատուփերի միջև ընկած տարածքում» (հոդված 48, 4-րդ կետ):

Ընտրական հանձնաժողովները

- Եղեգնաձորի 39/2 և 39/4 ՏԸՀ-ների նախագահները պաշտոնական քարոզարշավի ընթացքում, իրենց դիմումի համաձայն, հրաժարվել են իրենց

պարտականությունները կատարել: ԸՔ հկ դիտորդների գնահատմամբ՝ մտահոգիչ է այն երևույթը, որ նոր նախագահներ են ընտրվել ՏԸՀ-ների նորանշանակ անդամները, ինչը խոսում է ՏԸՀ ղեկավար կազմերի ոչ թե իրական ընտրության, այլ արտաքին ներազդեցությամբ՝ նրանց ղեկավարների նշանակումների մասին:

Սրանով է նաև բացատրվում որոշ ՏԸՀ-ների կողմից ընտրագործընթացներն ըստ հարկի կազմակերպելու անկարողությունը, քանի որ ՏԸՀ-ները համալրվել են ոչ գիտակ, երբեմն պատահական, ընտրական գործընթացներից անտեղյակ, ոչ փորձառու անձանցով: Նման հանձնաժողովների կողմից են ոտնահարվել նաև դիտորդների իրավունքները: Այսպես, օրինակ, ԸՔ հկ դիտորդներին քվեարկության արդյունքների ամփոփ արձանագրությունը չի տրամադրվել Կապանի թիվ 38/1, 38/3, 38/10 ՏԸՀ-ների կողմից: Սրանով հանձնաժողովների կողմից խախտվել են ԸՕ 30-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դիտորդի իրավունքները, որոնցով, մասնավորապես, դիտորդին իրավունք է տրվում անարգել ծանոթանալ ընտրական փաստաթղթերին, նիստերի արձանագրություններին և ստանալ դրանց պատճենները:

Առաջարկություններ

- Լիազոր մարմնի ստորաբաժանումներին հանձնարարել ճշգրտել ընտրողների ցուցակները և ժամանակին, ԸՕ կողմից սահմանած ժամկետներում, ներկայացնել ընտրողների ծանոթացմանը և ՏԸՀ-ներին:
- Քվեախցերի կառուցվածքը սահմանել՝ ԸՕ պահանջներին համապատասխան, որպեսզի պահպանվի քվեարկության գաղտնիության սկզբունքը:
- ՀՀ օրենսդրության համաձայն՝ համապատասխան պատժամիջոցներ կիրառել ընտրակարգի խախտումներ թույլ տված, անօրինական քարոզչություն իրականացրած անձանց նկատմամբ:
- Ընտրական տեղամասերի տեղակայման համար ընտրել հարմար վայրեր և դրանք ձևավորել ԸՕ պահանջներին համապատասխան:
- Անհապաղ ԱԺ կողմից բարեփոխել ԸՕ որոշ դրույթներ: Վերանայելով քվեաթերթիկները կնքելու՝ ԸՕ-ով սահմանված կարգը՝ բացառել ՏԸՀ-ների կողմից քվեաթերթիկները դիտարկելու, ընտրողների կամարտահայտությունը վերահսկելու և ուղղորդելու հնարավորությունը:
- Հարգել տեղական դիտորդների՝ ԸՕ-ով սահմանված իրավունքները:

«Ընտրությունը քոնն է» հասարակական կազմակերպությունը հայաստանյան ընտրությունները դիտարկող ամենախոշոր կազմակերպությունն է: Այն ունի 4000 կամավորներ, կառույցներ՝ հանրապետության 10 մարզերում եւ Երեւանի բոլոր համայնքներում: «Ընտրությունը քոնն է» հկ առաքելությունն է նպաստել Հայաստանում արդար եւ թափանցիկ ընտրությունների կայացմանն ու ժողովրդավարական գործընթացների զարգացմանը, տեղական ինքնակառավարման համակարգի իրական կայացմանն ու ընտրողների առջեւ կառավարման մարմինների հաշվետու դառնալուն, խթանել քաղաքացիների մասնակցությունը համայնքային կառավարմանը եւ Հայաստանի Հանրապետության ընտրողներին ընտրագործընթացների վերաբերյալ տրամադրել անաչառ, ճշգրիտ և հրատապ տեղեկատվություն: